ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցի հիմքը և առարկան փոփոխելը թույլատրելու մասին

ԵԴ2/7274/02/25 ք. Երևան
9 Հոկտեմբեր 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Ա.Օհանյանը, քննության առնելով ըստ հայցի <<Սեյսմշին>> ՍՊԸ-ի և <<Ճին նախագիծ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ թիվ ՀՏՁՀ-ՎՁԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում<<Ճին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործով հայցվոր Արամ Կիմի Սարգսյանի ներկայացուցիչ Լուսինե Խաչիկի Գրիգորյանի՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելը թույլատրելու մասին միջնորդությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց
II
(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

1. ***<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>***

12.07.2025 թվականին՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգի **(այսուհետ**

նաև՝ Համակարգ) միջոցով, <<Սեյսմշին>> ՍՊԸ-ի և <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ թիվ ՀՏՁՀ-ՎՁԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին և <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

14.07.2025 թվականին ժամը 21:16-ին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով մակագրվել է դատավոր Ա.Օհանյանին:

15.07.2025 թվականին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով հասանելի է դարձել Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

24.07.2025 թվականին Դատարանը <<Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին>> որոշում է կայացրել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125 հոդվածով սահմանված կարգով <<Հայցադիմումը վարույթ ընդունելու>> Դատարանի որոշումը և իրավունքների ու պարտականությունների պարզաբանմամբ գրություններն ուղարկվել է կողմերին:

20.08.2025 թվականին պատասխանող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել է դիրքորոշում հայցադիմումի վերաբերյալ:

25.08.2025 թվականին Դատարանը <<Նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ>> որոշում է կայացրել:

20.08.2025 թվականին Դատարան է ներկայացվել <<Սեյսմշին>> ՍՊԸ-ի և <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լուսինե Խաչիկի Գրիգորյանի՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելը թույլատրելու մասին միջնորդությունը **(այսուհետ նաև՝ Միջնորդություն)**:

09.10.2025 թվականին Միջնորդության քննությունն ավարտվել է:

2. Հայցվորի ներկայացուցչի՝ Միջնորդության բովանդակությունը և պահանջը.

Դիմելով Դատարան Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է. **(մեջբերման սկիզբ)**

<<Հարգելի՛ Դատարան,

Օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ և 170-րդ հոդվածներով սահմանված դատավարական իրավունքներից, Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում թիվ ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործով հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը /լրացումը/:

Ինչպես հայտնի է հայցվորների անունից հայցադիմում եմ ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, որով խնդրել եմ ոչ իրավաչափ ճանաչել թիվ ՀՏՁՀ-ՎՁԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում<<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ>>ում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը:

Հայցը ներկայացվել է երկու փաստական հիմքով՝

Հիմք 1՝

1. ՀՀ ֆինանսների նախարարությունը<<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ>>ում ներառել է այն պայմաններում, երբ օրենքով սահմանված ժամկետում հայցվորները հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան և խնդրել անվավեր ճանաչել 27.08.2024թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի <<Սեյսմշին>> ՍՊԸ–ին և <<Շին նախագիծ>> ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին որոշումը: Ներկայացված հայցադիմումով նշել եմ նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 09.10.2024թ. հայցադիմումն ընդունել է վարույթ և 10.10.2024թ. Դատարանը https://cabinet.armlex.am/ համակարգի միջոցով ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկել է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին թիվ Ո-ԵԴ2-7676-02-24 որոշումը, սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը միայն պատճառաբանությամբ, որ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն իրեն ուղարկվել է ոչ թե էլեկտրոնային փոստի միջոցով, այլ՝ https://cabinet.armlex.am/ համակարգի, հայցվորներին ներառել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ անտեսելով այն կարևորը, որ հայցվորները օրենքով սահմանված ժամկետում վիճարկել են 27.08.2024թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի <<Սեյսմշին>> ՍՊԸ–ին և <<Շին նախագիծ>> ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին որոշումը:

Այսինքն, ոչ իրավաչափ է թիվ ՀՏՁՀ-ՎՁԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում<<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակ>>ում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը:

Հիմք 2՝

Ներկայացված հայցադիմումով նշել եմ նաև, որ հայցվորները վճարել են հայտի ապահովման գումարը, ինչի պայմաններում Հրավերի 8.14 կետի հիմքով հայցվորները պետք է հանվեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից: Ընդ որում, ուշագրավ է այն հանգամանքը, որ հայտի ապահովման գումարը վճարված լինելու մասին գրավոր կարգով լիազորված մարմնին տեղեկացրել է նաև Պատվիրատուն: Սակայն լիազորված մարմինը պնդել է, որ առկա է թիվ ԵԴ2/7676/02/24 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 07.11.2024թ. վճիռը, որով մերժվել է հայցվորների հայցը:

Տվյալ դեպքում՝ լրացնելով հայցի փաստական հիմքերը, հայտնում եմ, որ 01.08.2025թ. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ2/7676/02/24 քաղաքացիական գործով կայացրել է որոշում, որով որոշել է՝ Սեյսմշին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և <<Շին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի: Թիվ ԵԴ2/7676/02/24 դատական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից 07.11.2024 թվականին կայացված վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ սույն որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության:

Այսինքն, նշվածից հետևում է, որ այլևս բեկանված է օրինական ուժի մեջ մտած այն վճիռը, որով մերժվել էր հայցվորների՝ 27.08.2024թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին և <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջը:

Այլ կերպ ասած՝ թիվ ԵԴ2/7676/02/24 քաղաքացիական գործն ավարտված չէ և այդ գործով առկա չէ եզրափակիչ դատական ակտ, ինչը հայցադիմումում նշված այլ հիմքերի հետ միասին ևս մեկ բավարար հիմք է պնդելու, որ լիազորված մարմինը ոչ միայն սխալ է ներառել հայցվորներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այլ նաև հայտի ապահովման գումարը վճարած լինելու պայմաններում պարտավոր է հանել հիշյալ ցուցակից:

Գաղտնիք չէ, որ հայց հարուցելու նպատակը դատական ճանապարհով հասնել իրավական արդարությանը՝ վերականգնելով հայցվորների խախտված իրավունքը: Տվյալ դեպքում հայց հարուցելով հայցվորի նպատակը կայացել է նրանում, որ ոչ իրավաչափ ճանաչվի ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը և հայցվորները դուրս գան գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից, ինչպիսի պատճառաբանությամբ էլ ներկայացվում է սույն միջնորդությունը:

Տվյալ դեպքում համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

Նույն հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Սույն դեպքում հայցվորները փոփոխում են հայցի առարկան և հիմքը, ավելի կոնկրետ՝ լրացնում են, որի արդյունքում ո՛չ փոփոխվում է այն իրավունքը և օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է և ո՛չ էլ քննվող գործը դուրս է գալիս առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Մատնանշածս հանգամանքների հիմքով

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Ոչ իրավաչափ ճանաչել թիվ ՀՏՀՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում<<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ>>ում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը և պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը<<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին հանել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակից:>> **(մեջբերման ավարտ)**:

III

(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝

*1. **Հայցվորը հայցի առարկայի** և **հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը**:*

*2. Սույն օրենսգրքի իմաստով՝ **հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից Պատասխանողներին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է**, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:*

*3. Սույն օրենսգրքի իմաստով՝ **հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից** հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև **հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու** կամ պակասեցնելու **եղանակով**:*

*4. **Առաջին ատյանի դատարանը** հայցի առարկայի կամ **հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում**, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:*

5. Հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

*6. **Հայցի առարկայի** կամ **հիմքի** փոփոխությունը թույլատրելու դեպքում դատարանն անհրաժեշտության դեպքում իրականացնում է սույն օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունները:*

Տվյալ դեպքում 20.08.2025 թվականին Դատարան ներկայացված Հայցվորների ներկայացուցչի՝ Միջնորդությամբ փոփոխվել է հայցի առարկան և փաստական հիմքերը, մասնավորապես՝ հայցի առարկան ավելացվել է

ածանցյալ պահանջներով, իսկ փաստական հիմքերը նոր հիմքերով:

Դատարանը գտնում է, քանի որ հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդության բավարարմամբ չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս չի գալից առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից, հետևաբար նման կերպ հստակեցվել է նաև Պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի իրավական և փաստական հիմքերը, հետևաբար Միջնորդությունը ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի համաձայն՝

(...):

8. Հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստում պատասխանողին տրամադրում է ոչ պակաս, քան մեկշաբաթյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Տվյալ դեպքում, քանի որ հայցի առարկան և հիմքը ենթակա է փոփոխման, հետևաբար Դատարանը գտնում է, որ ավելացված հայցի առարկայի և հիմքի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար Պատասխանողին անհրաժեշտ է տրամադրել երկշաբաթյա ժամկետ:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170, 199-200 հոդվածներով, Դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ըստ հայցի <<Սեյսմշին>> ՍՊԸ-ի և <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ թիվ ՀՏՁՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում<<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Սեյսմշին>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին հա. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործով հայցվոր <<Սեյսմշին>> ՍՊԸ-ի և <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լուսինե Խաչիկի Գրիգորյանի՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելը թույլատրելու մասին միջնորդությունը բավարարել.

1.1. Հայցադիմումի փաստական հիմքերն ավելացնել

20.08.2025 թվականին Դատարան ներկայացված Հայցվորի՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելը թույլատրելու մասին միջնորդությունով նշված փաստական հիմքերով.

1.2. ԵԴ2/7274/02/25 քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումի առարկան (հայցապահանջը) փոփոխել և խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

<< Ոչ իրավաչափ ճանաչել թիվ ՀՏՉՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՉԲ-2024/5 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Մեյսմշին>> ՍՊԸ-ին <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ>>-ում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության գործողությունը և պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը <<Շին նախագիծ>> ՍՊԸ-ին և <<Մեյսմշին>> ՍՊԸ-ին հանել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակից:>>:

2. Սույն որոշումը **ստանալուց հետո** Պատասխանողին տրամադրել երկշաբաթյա ժամկետ՝ **փոփոխված հայցադիմումի վերաբերյալ** հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Digitally signed by OHANYAN ARMAN

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am